ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/34

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Էլմարկետ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցում, էլեկտրոտեխնիկայի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/757-2020 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.01.2020թ.-ի թիվ ՊՆ/02/140-2020 գրության հիման վրա, 23.01.2020թ.-ին «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 03.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2020/31 համարի ծածկագիրը, իսկ 06.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2020/31 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

11.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/34 համարի ծածկագիրը և 18.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 18.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.02.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.01.2020թ.-ի թիվ ՊՆ/02/140-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները սահմանված կարգով ծանուցվեցին երեք (3)

աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Վերը նշված ընթացակարգի 6-րդ չափաբաժնի (Ռադիոընդունիչներ) մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն հայտով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը ներկայացրել է ամհամապատասխանություններով, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից պահանջվել է շտկում, սահմանված ժամկետում «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն ներկայացրել է տեխնիկական բնութագրի նոր տարբերակը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը 6-րդ չափաբաժնի մասով մերժել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Էլմարկետ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Էլմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էլմարկետ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/757-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել դիրքորոշում՝ չներկայանալով նաև նշանակված նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2020/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարավել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի համաձայն՝ 6-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը՝ Ռադիոընդունիչ /հատ/

Պետք է ունենա.

Զարթուցիչի հնարավորություն՝ **նշված ժամին** ազդանշան տալու հնարավորությամբ,

3 ԼԵԴ լույսերով լապտեր,

Ներկառուցված բարձրախոս,

Արտաքին ադապտերի MINI USB 5 PIN մուտք,

Ականջակալի մուտք (3.5մմ տրամագծով),

Արևային էներգիայով, պտտվող բռնակով (դինամո), համակարգչից և արտաքին ադապտերից լիցքավորվելու հնարավորություն,

Գույնը՝ կանաչ (պաշտպանական գույնի),

Էլեմենտների քանակը՝ ռադիոընդունիչի հնարավորության համապատասխան,

220 Վ հոսանքին լարով միացման հնարավորությամբ

FM, MW, SW (Հաճախականության մոդուլյացիա, ցածր և միջին ալիքների ընդունում):

Ականջակալ. (2 հատ)՝ չափսի փոփոխման հնարավորությամբ, նախատեսված 3.55մմ տրամագծով մուտք ունեցող սարքավորումների համար:

USB մուտք մեդիա փլեերով կրիչի վերարտադրությունը լսելու համար,

USB ֆլեշ կրիչ, որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով:

Նվազագույնը 4GB տարողունակություն:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլմարկետ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ.

1. բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին,

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քարտուղարի կողմից 11.12.2019թ.-ին Մասնակցին ուղարկվել է ծանուցում այն մասին, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էլմարկետ» ՍՊԸ-ն:

1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում v.sahakyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը թիվ 3.1 հավելվածով ներկայացրել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որում բացակայել է հրավերով սահմանված (որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով) տողը:

Հանձնաժողովի 17.11.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին բոլոր 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացի «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրի, որտեղ առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

«Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում՝ 6-րդ չափաբաժնում (ռադիոընդունիչ) բացակայում է հրավերով սահմանված հետևյալ տողը՝ (որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով):

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 27.12.2019թ.-ին Մասնակցի ուղարկվել է ծանուցում նույնությամբ նշելով թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունը և հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը ելեկտրոնային եղանակով ուղարկել v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակը, որում բացակայել է (Զարթուցիչի հնարավորություն՝ նշված ժամին ազդանշան տալու հնարավորությամբ) նախադասության մեջ բացակայել է (նշված ժամին) արտահայտությունը:

Հանձնաժողովը 17.11.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ նշել է, որ սահմանված ժամկետում «Էլմարկետ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, սակայն ներկայացված նոր (շտկված) տեխնիկական բնութագրում (Զարթուցիչի հնարավորություն՝ նշված ժամին ազդանշան տալու հնարավորությամբ) նախադասության մեջ բացակայել է (նշված ժամին) արտահայտությունը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը կողմից Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ ներկայացրած տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/757-2020 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերով նախատեսված է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում

ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի

քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ապրանքների գնման դեպքում ներկայացնի՝ իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի համաձայն՝ 6-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը՝ Ռադիոընդունիչ /հատ/ …

Պետք է ունենա.

Զարթուցիչի հնարավորություն՝ **նշված ժամին** ազդանշան տալու հնարավորությամբ,

USB ֆլեշ կրիչ, որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով:

Ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած «Էլմարկետ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի

(ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 11.12.2019թ.-ին Մասնակցին ուղարկվել է ծանուցում այն մասին, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էլմարկետ» ՍՊԸ-ն, որը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում v.sahakyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 17.11.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ վերջինիս կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերում՝ 6-րդ չափաբաժնում (ռադիոընդունիչ) բացակայում է հրավերով սահմանված հետևյալ տողը՝ (որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով):

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 27.12.2019թ.-ին Մասնակցի ուղարկվել է ծանուցում նույնությամբ նշելով թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունը և հայտնել է, որ Հանձնաժողովը երեք աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը ելեկտրոնային եղանակով ուղարկել v.sahakyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Հանձնաժողովը վերը նշված արձանագրությամբ նշել է, որ սահմանված ժամկետում «Էլմարկետ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունը, սակայն ներկայացված նոր (շտկված) տեխնիկական բնութագրում (Զարթուցիչի հնարավորություն՝ նշված ժամին ազդանշան տալու հնարավորությամբ) նախադասության մեջ բացակայել է (նշված ժամին) արտահայտությունը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը կողմից Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է՝ ներկայացրած տեխնիկական բնութագիրը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է հետևյալ պայմանները՝ «Զարթուցիչի հնարավորություն՝ **նշված ժամին** ազդանշան տալու հնարավորությամբ, USB ֆլեշ կրիչ, **որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով**»: Մասնակիցը թիվ 3.1 հավելվածով ներկայացրել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որում բացակայել է հրավերով սահմանված (որի վերարտադրանքը պետք է լսվի ռադիոընդունիչի բարձրախոսներով) տողը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը «Էլմարկետ» ՍՊԸ-ին առաջարկել է 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Մասնակիցի կողմից ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված տարբերակը, որում այս անգամ բացակայել է մեկ այլ՝ (Զարթուցիչի հնարավորություն՝ նշված ժամին ազդանշան տալու հնարավորությամբ) նախադասության մեջ բացակայել է (նշված ժամին) արտահայտությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե

Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցն պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էլմարկետ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով համապատասխանության շտկումներ՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2020թ.-ի թիվ 26/26-1/757-2020 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/34 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլմարկետ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**